ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«28» ապրիլի 2022թ. № 44 - Ա

«ՍՊԻՏԱԿ ՄՈԼ» ՍՊԸ-ԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սպիտակ համայնքի Ալեք Մանուկյան փողոց, թիվ 77, թիվ 90, թիվ 12, թիվ 58, թիվ 65, թիվ 95, թիվ 68 հասցեներում գտնվող՝ «ՍՊԻՏԱԿ ՄՈԼ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 06-006-0478-0001 կադաստրային ծածկագրով 1,2 հեկտար մակերեսով, 06-006-0478-0004 կադաստրային ծածկագրով 0,02797 հեկտար մակերեսով, 0-006-0478-0009 կադաստրային ծածկագրով 0,024 հեկտար մակերեսով, 06-006-0478-0008 կադաստրային ծածկագրով 0,003798 հեկտար մակերեսով, 06-006-0478-0005 կադաստրային ծածկագրով 0,008 հեկտար մակերեսով, 06-006-0478-0010 կադաստրային ծածկագրով 0,024 հեկտար մակերեսով, 06-006-0478-0006 կադաստրային ծածկագրով 0,008 հեկտար մակերեսով հողամասերին կից Ալեք Մանուկյան փողոցի վրա գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության՝ Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող 06-006-0478-0015 կադաստրային ծածկագրից 0,005595 հեկտար մակերեսով և 0,045539 հեկտար մակերեսով հողամասերը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման 1-ին կետի 2-րդ, 4-րդ և 6-րդ ենթակետերով սահմանված չափորոշիչներին և որպես առանձին գույքային միավոր հնարավոր չէ օտարել աճուրդային կարգով, հիմք ընդունելով «ՍՊԻՏԱԿ ՄՈԼ» ՍՊԸ-ի տնօրեն Սուսաննա Սամվելի Սիսակյանի դիմումը՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է***.

1. Համաձայնություն տալ Սպիտակ համայնքի Ալեք Մանուկյան փողոց, թիվ 77, թիվ 90, թիվ 12, թիվ 58, թիվ 65, թիվ 95, թիվ 68 հասցեներում գտնվող՝ «ՍՊԻՏԱԿ ՄՈԼ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 06-006-0478-0001 կադաստրային ծածկագրով 1,2 հեկտար մակերեսով, 06-006-0478-0004 կադաստրային ծածկագրով 0,02797 հեկտար մակերեսով, 0-006-0478-0009 կադաստրային ծածկագրով 0,024 հեկտար մակերեսով, 06-006-0478-0008 կադաստրային

ծածկագրով 0,003798 հեկտար մակերեսով, 06-006-0478-0005 կադաստրային ծածկագրով 0,008 հեկտար մակերեսով, 06-006-0478-0010 կադաստրային ծածկագրով 0,024 հեկտար մակերեսով, 06-006-0478-0006 կադաստրային ծածկագրով 0,008 հեկտար մակերեսով հողամասերին կից Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող, Ալեք Մանուկյան փողոցի վրա գտնվող, 06-006-0478-0015 կադաստրային ծածկագրից 0,005595 հեկտար մակերեսով և 0,045539 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասերը ընդլայնման նպատակով, ուղղակի վաճառքով օտարելուն՝ համաձայն հատակագծերի:

2. Հողամասի ուղղակի վաճառքի գինը սահմանել հողամասի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնի չափով՝ 624 346 ՀՀ դրամ (1 քառակուսի մետրը 1221 ՀՀ դրամ):

ԿՈՂՄ (14) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

ՔԱՋԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ԼՈՒՍԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԱՐՏԱԿ ՄԱԹՈՍՅԱՆ

ՀԱՅԿ ՍԻՍԱԿՅԱՆ

ԱԼՎԱՐԴ ՀԱՄԲԱՐՅԱՆ

ԿԱՐԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԳԱԳԻԿ ՅԱՅԼՈՅԱՆ

ՌԱՖԱՅԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ

ԱՆՆԱ ԱՋԱՄՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ

ՆՈՒՆԵ ԷՀՏԻԲԱՐՅԱՆ

ԶԱԼԻԿՈ ՀԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՐԴՈՒՀԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ԱՐԱՄԱՅԻՍ ՓԻԼՈՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. ապրիլի 28
ք. Սպիտակ